

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ դասախոս

ԿԱՊԵԼԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՍԱՆ ՄԻՋՈՅ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ ԵՎ ՊԱՏԺԱՏԵՍԱԿ՝ ԶՐԱԴԱԾԱԿԱՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Ուսումնասիրությունից պարզվում է, որ հանցագործներին պարաներով, երկարյա շղթաներով կապելը գրադաշտական և վաղ քրիստոնեական իրավունքում եղել է քրեադատավարական խափանման միջոց, քննության մերող (անձին զղման ու խոստվանության հակելու միջոց) և պատժատեսակ, կրել է ծիսական-արարողակարգային բնույթ: Ընդ որում, կապելը ոչ միայն որպես պատիճ, այլ նաև որպես խափանման միջոց ու քննության մերող նույնապես ծառայել է հանցագործությունների կանխման նպատակներին: Կապելու ձևերը եղել են տարբեր: Ամբարշտություն, աղանդավորություն և զանազան այլ ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, որոնք հրաժարվել են գոյալուց, մեղքերը խոստվանելուց, ներում ու փրկություն հայցելուց, որպես պատժատեսակ և կատարածի համար որպես հատուցում կիրառվել են կապելու հատուկ, առավել խիստ ու դաժան ձևեր: Դրանք կրել են «չարաչար», «փխստ», «կարևոր», «քրուն» և այլ անվանումներ: Նման դեպքերում հանցագործը կապել է պարանոցից, ուղքերից ու ճենքերից, նրա մարմնին տրվել է դիմական տեսք, որից հետո նա նետվել է Խոր Վիրապ (ինչպես Գրիգոր Լուսավորիչը) կամ շղթայակապ բանտարկվել (ինչպես Արշակ Երկրորդ հայոց թագավորը), կամ մահապատճել այլ միջոցներով (ինչպես սուրբ Կույսեր Հռիփսիմեն, Գայանեն և այլք): Հիմնավորվում է նաև, որ հանցագործներին զանազան խորհրդանշական-ծիսական ձևերով կապելուն վերաբերող զրադաշտական նորմեր, պատժատեսակներ և այլն, Գրիգոր Լուսավորիչ կողմից ներմուծվել են հայկական վաղ քրիստոնեական իրավական համակարգ և լեզվաբառեական:

Հիմնարարեր- Տրդառ Երրորդ Սեծ, Գրիգոր Լուսավորիչ, կապել, գրադաշտական Հայաստան, քրիստոնեական Հայաստան, Խոր Վիրապ, դժոխ:

**Ակիգրը «Արդարադատություն» գիտական
հանդեսի 2017 թվականի 4 (39) համարում**

Հանցագործներին կամ մեղավորներին կապելու մասին տեղեկություններ է հաղորդում Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմություն» գրքում: Նա գրում է, որ հայոց Տիրան թագավորը՝ խարելով իրանական Ատրպատականի սատրապ Շապուհ Վարազին, որպես նվեր նրան խոստացած ձիու փոխարեն մեկ այլ ձի է ուղարկում: Վերջինս՝ վրդովված իրեն խարելու փաստից¹, և ձեսցնելով, որ հյուր է եղել հայոց թագավորին, հարմար պահի բռնել է նրան և «կապեալ գրու և զանու նորա ի կապս երկաքիս» հասցրել Դաւարիք գյուղ, և այնտեղ շիկացրած երկարով կուրացրել նրան²:

Փավստոս Բուզանդը նկարագրում է կապելու մեկ այլ արտառող ձև ևս: Այն բանից հետո, եթե հայոց Արշակ Երկրորդ թագավորը՝ խախտելով Իրանի թագավոր Շապուհ Երկրորդին Ավետարանի վրա տված իր երդումը և նրա բանակից փախուստի է դիմել, ապա վերջինս յորանասուն քրիստոնյա հոգևորականների, որոնք երդման համար տրամադրել էին Ավետարանը, մի զրի մեջ (գրադաշտական դժոխը թաղկացած է սացապատ գրերից կամ փոսերից) փողոտել է տվել: Ավետարանն էլ,

որի վրա երդվել էր Արշակ թագավորը, նա «կապել պատէր երկաթի սարեօր (լարերով – Ս. .) և իրով մատանեալ կնքեալ, ի գանձ տան իրամայէր. և տայր իրաման պահել զգուշութեամբ»³: Այսպիսով, ծիսական արարողություններ են կատարվել, որի միջոցով քրիստոնյաները մորթուսվել են դժոխիք փոսերում, իսկ Ավետարանը, որպես հանցավոր հավատալիքների աղբյուր ու խարելու միջոց՝ կապել է երկարյա լարերով և բանտարկվել թագավորի զանձատանը (արխիփում): Այս միջադեպը նույնապես ապացույց է այն բանի, որ կապելը, լինի դա մարդու կամ որևէ առարկայի՝ եղել է դատավարական ձես և պատիճ:

Փավստոս Բուզանդը պատմում է նաև, որ հայոց Արշակ Երկրորդ թագավորին անհնազանդության, ստախոսության, երդմնահարության հանցաների համար ցմահ ազատազրկման դատապարտելուց հետո, Շապուհ Երկրորդը «...տայր իրաման բերել շղթայս, և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռու նորա երակաթս, և խաղացուցանել զնա ի յԱնդըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեոցի»⁴: Եվ եթե Դրաստամատ ներքինին բոլոյատվություն է ստանում այդ բանում այցելել իր թագավորին, ապա բանտախցում նրան գտնում է պարանոցից, ուղքե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րից ու ձեռքերից երկաթյա շղթաներով կապված: Նա արձակում է «...զԱրշակ ի կապանացն երկարեաց ի ձեռնակապացն և յոտից երկարոց և յանրոց պարանոցն շրբայիցն սարեացն...»: Այսախով, Արշակ Երկրորդ թագավորը ոչ միայն դատապարտված է եղել ցմահ ազատազրկման և մոռացման, այլև առանձնահատուկ կերպով բանտում կապված պահելուն: Եվ տվյալ դեպքում նրա նկատմամբ կիրառվել է երկու պատժատեսակ՝ «դառն կապանքներով» կապվելը և ցմահ բանտարկությունը: Կարելի է կարծել, որ տվյալ դեպքում այս երկու պատժատեսակներն ել եղել են հիմնական:

Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկում կապելու մասին նույնպես պահպանվել են հույժ կարևոր տեղեկություններ: Այս երկում նույնպես կապելու հանդես է գալիս որպես ծիսական խափանման միջոց, քննության մերոդ և պատժատեսակ: Եղիշեն գրում է, որ Իրանի թագավոր Հազար Երկրորդը կապելու մասին կապելու մասին նույնպես պահպանվել են հույժ կարևոր տեղեկություններ: Այս երկում նույնպես կապելու հանդես է գալիս որպես ծիսական խափանման միջոց, քննության մերոդ և պատժատեսակը: Եղիշեն գրում է, որ Իրանի թագավոր Հազար Երկրորդը կապելու մասին կապելու մասին նույնպես պահպանվել է կապելու մի տուաւ ի չարչարանս, և հանեալ ի բաց գտերություն ի նմանէ՝ ընկալաւ զվճիո մահու»: Ինչպես դա ակնհայտ է, Գարեգին իշխանը՝ դատապարտվելով մահվան, կապվել և չարչարվել է այնախիս ձևերով, ինչպես ժամանակին Գրիգոր Լուսավորիչը՝ մահվան դատապարտվելիս: Այդպես կապված վիճակում Գարեգինը երկու տարի պահվել է անազատության մեջ, ենթարկվել կտտանքների, զրկվել իշխանությունից, բայց հետո ներում ստացել և ազատվել: Փաստորեն այստեղ երկու տարով կապվելը, ազատազրկվելը, կտտանքների, անարգանքի, ստորացումների ենթարկվելը, պաշտոնագրկությունը և մահապատիժը (որը չի իրականացվել) հանդես են եկել որպես ինքնուրույն պատժատեսակներ:

Այդ փաստը հիմնավորվում է Եղիշեի մեկ այլ վկայությամբ: Նա պատմում է, որ հայ զինվորականներին հավատափոխության հակելու նպատակով գրադաշտական կրոնի չարասեր սպասավորները նրանց տանջել են, որից հետո «...նովին կապանօր անցուցինի տեղսն արգելանին»: Նա արվել է պարսից թագավորի հրամանով, որը «զամենայն վճառուն պատճառս արկաներ զկապելովքն. և զայս առներ սատանայական խրատուն»: Այսախով, նորից հաստատվում է, որ կապելը և կտտանքների ենթարկելը ոչ թե կամայականություն է, այլ կատարվել է սատանայական խրատներին, այն է՝ զրադաշտական իրավունքի նորմերի հիման վրա:

Եղիշեն հիշատակում է նաև հայ զինվորականներին կապելու և ստորացնելու բոլորվիմն մի նոր տեսակի մասին: Վերոնշված դեպքից 12 օր հետո Իրանի թագավոր Հազար Երկրորդը ճաշկերույթի

է հրավիրել քրիստոնյա զորականների, նրանց առատորեն կերակրել: Խսկ երբ նրանք հեռանալիս են եղել, ապա «...արգելին զոմանս ի նոցանէ ձեռս եսոս կապելով, և զխնճանունսն կնքելով և զգուշութեամբ պահելով՝ եր որ զերկուս առուս, եր որ զերիս»: Կապվել են նրանց ձեռքերը և կնքվել-կապվել խոնջանների (շալվարների) կապերը, և այդ վիճակում նրանք բանտարկվել են երկու-երեք օր: Որպեսզի առատորեն ուտելուց հետո չկարողանան զուգարան գնալ և աղտոտվեն: Նման դժոխային պատկերներ կան «Արտա Վիրապ Նամակի» 80-րդ և 98-րդ գլուխներում⁹: Եվ դա արվել է ոչ միայն ֆիզիկական տվայտանքներ պատճառելու, այլև քրիստոնյա իշխանների արժանապատվությունն առավել չափով և հրապարակորեն նսեմացնելու, նրանց զղջման հակելու և զրադաշտական դարձնելու (ուղղելու) նպատակով:

Հստ Եղիշեի «չարաչար կապվելու» է դատապարտվել մարզպան Վասակ Սյունին: Եղիշեն պատմում է, որ 251 թվականի հայկական ապատմբությունը ճնշելուց հետո դրա դեկապարների նկատմամբ Տիգրոնում տեղի է ունեցել դատավարություն: Վասակի կողմից զանազան հանցանքներ (պետական դավաճանություն, ապստամբության կազմակերպում և այլն) կատարելու փաստը հիմնավորելուց հետո նրա նկատմամբ կայացել է դատավճիռ, որից անմիջապես հետո դատավարության դահլիճ է մտել դահճապետը՝ այն կիրառելու համար: «...Եվ մտաւ նա վաղվաղակի առաջի ամենայն մեծամեծացն, մերկացոյց ի նմանէ զպատիւն զոր ուներ յարքունուս, և զգեցոյց նմա (Վասակին) հանդերձ մահապարտի: Կապեցին զոսու և զձեռս, և կանանցարար նստոցին ի ձի մատակ. տարան և ետուն յայն զընդան, ուր կային մահապարտն ամենայն»¹⁰: Այսախով, Վասակին ոչ միայն կապվել են, այլ նաև հասուկ կերպով նսեմացրել նրա պատիվն ու արժանապատվությունը, «կանանցարար» նստեցրել մատակ ձիու վրա, հրապարակավ ենթարկել ծաղրի և այդ վիճակում ուղարկել զնդան:

Դրանով Վասակի չարչարանքները չեն ավարտվել: Եղիշեն գրում է. «Եվ օր ըստ օրէ թերեւին իբրև զգէ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին: ...Եվ իբրև այսպէս յամենայն կողմեն հարէալ վատրարացաւ, ամկա զախսու դժնդակս անդէն ի կապան: Ձեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան զոգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրանսութիւն նորա: Եռացին որդումք ընդ աչ նորա և ի վայր սորացին ընդ ոռունզ նորա. Խցան լսելիք նորա, և ծակուեցան չարաչար շրբունք նորա. լուծան ջիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոսից նորա: ... և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ»¹¹: Այսախով, ամեն օր Վասակին ձեռքե-

րը, ոտքերը (և, ըստ երևույթին, պարանոցն ու բերանը նույնապես) կապած վիճակում բանտից քարշ են տվել բազավորական պալատի առջևի մեծ հրապարակ, ցուցադրել կապված, ստորացուցիչ վիճակում և այն տեսքով, ինչպիսին ունեին գրադաշտական դժոխում հավիտյանս տառապող որոշ մեղավորներ (Արտա Վիրապ Նամակին 54-րդ, 98-րդ, 71-րդ գլուխներ): Խսկ «ծակոտեցան չարաշար շրջունք նորա. լուծան ջիլ բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա» նախադասության իմաստից կարելի է հետևություն անել, որ դաիհճները նրա ոտքերը հասուկ հարմարանքների միջոցով ննանեցրել են դևերի ոտքերին՝ կրունկները ոլորելով դեպի առաջ: Ծիշտ այնպես, ինչպես կապիճներ և կողդեր օգտագործելով փորձում էին դա անել Գրիգոր Լուսավորչի ոտքերի հետ՝ նրան դիվական տեսք տալու համար: Եվ որին կապելու և դրա հետ զուգորդված բոլոր գործողությունները նույնապես հրապարակավ կատարվում էին բազավորական պալատի առջևում, որի մոտ գտնվում էր բանտը:

Այս նկարագրությունից ակնհայտ է դառնում նաև, որ Եղիշեի պատկերացումը դժոխքի մասին լինովն գրադաշտական է: Դրա մասին են վկայում նրա կողմից Վասակի հետ կատարվող դիվական փոփոխությունների նկարագրությունները և նրա այն եզրակացությունը, որ նա «ճաշակեաց զմահ հեղձամհձուկ, և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ»¹³: Դրանով հաստատվում է այն փաստը, որ հայ հոգլուրականների համար գրադաշտական և քրիստոնեական դժոխքները եղել են նույնություն: Տարբեր են միայն այնտեղ ընկնելու պատճառները:

Հանցագործներին զանազան ձևերով կապելու մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը»: Խորհելով այն մասին, թե Վասակ Սյունին մասնակցելու՝ է արդյոք 451 բվականին պլանավորվող ապստամբությանը, նա նշում է, որ այդ դեպքում պարսկական արքունիքում որպես պատանդ պահվող նրա երկու որդիները կարող են ենթարկվել «քազմաժամանակեայ կարևոր կապանաց և բանդից դիպեալը՝ տանջին անխնայ»¹⁴: Այսպիսով, փաստվում է, որ Իրանում գոյություն է ունեցել կապելու ձևով այնպիսի պատիժ, ինչպիսին է զնդաններում շղթաներով «Քազմաժամանակեայ կարևոր կապանքների» մեջ պահելը:

Իր երկի մեկ այլ հատվածում Ղազար Փարպեցին պատմում է, որ պարսիկները Բատենի եպիսկոպոս Թարիկին ուժաստանում պահել են «խիստ կապանօր» (ծանր կապանքներով): Նա նշում է նաև, որ Իրանի Միհրներսէի հազարապետը բանտապահներին իրամայել է հայ կապայլ նախարարներին ու սեպուհներին «տանել և զնոսա խիստ կապանօր պահել», մինչև որ հաջորդ օրը բազ-

վորն անձամբ նրանց քննության ենթարկի: Հաջորդ օրն ատյանն անձամբ վարող բազավորը հրամայել է «զապստամբսն հայոց կապանօր ածել առաջեւալ»: Փարպեցին պատմում է նաև, որ դատավարությունից հետո Հազկերտ Երկրորդը հրամայել է (դատավագին է կայացրել) 31 հայ նախարարների, սեպուհների և հոգլուրականների «խիստ կապանօր պահել անդէն ի Վրկանի»¹⁶: Եվ խիստ կապանքները, որոնք եղել են Երկարից, տվյալ դեպքում կիրառվել են որպես առանձին պատժատեսակ՝ զուգորդված ազատազրկման հետ:

Մեկ այլ տեղում Ղազար Փարպեցին նշում է, որ քուշանների դեմ արշավանք սկսելուց հետո Հազկերտ Երկրորդը նրանց իր գորքի հետ տեղափոխել է Ապար աշխարիի Նյուշապուհ քաղաքի միջնաբերդ: Չեն տեղափոխվել միայն քահանաներ Սամուելն ու Արքահանը, որոնք ատյանի կողմից դատապարտված էին «քուն կապանքների» և չարաշար մահիվան»¹⁷:

Այսուհետև, Հազկերտ Երկրորդը հրաման է արձակել մահապատժի ենթարկել այն եկեղեցականներին (Հովսեփ կարողիկոս, Աւոնդ երեց և այլք), որոնք թողնվել էին «...կապեալս ի Նյուշապուհ ի դղեկին»: Նա դաիհճներին պատվիրել է «Երթալ փուրով յառաջ քան զինքն, և հանել զուրք քահանայսին ի բանտէն, որ էին կապեալք նորա և նախարարքն հայոց, և տանել զնոսա հեռի ի քաղաքէն յանկիս և յանապատ տեղի և անդ չարալուկ տանջանօր, որպես և կամեսցի, բարձգէ զնոսա ի կենաց»¹⁸: Ավելորդ հուզումներ չառաջացնելու համար նախապես լուր է տարածվել, որ նրանք՝ Հովսեփ կարողիկոսը և մյուս հոգլուրականներն ազատվելու են: Նրանց «ազատելու» համար բերդ է եկել դաիհճների, մողերի և արհեստավոր դարբինների բազմություն՝ «զահիք բազօք սաստկապես լուցելով»: Դարբիններն իրենց բերած գործիքներով սկսել են «խարտել, կտրել և ի բաց հանել գերկարսն ի ձեռաց և յոտից, և ի պարանոցէ սրբոցն. և զոր ոչն կարասցեն կտրել խարտոցօքն՝ ուռամքք ջարդեալ զրենու երկարոյն, դնելով ի վերայ սպիցն, բեկեալ հանցեն ի բաց: Զանզի ստուարք էին և ծանունք քան զբնութիւն ամենայն երկարոյ, որք զայլ մահապարտսն կապեին»²⁰: Այսպիսով, կասկած չի կարող լինել, որ եղել են «կարևոր կապանքների», «խիստ կապանքների», «քազմաժամանակյա կարևոր կապանքների», «չարաշար և դառն կապանքների», «քուն կապանքների», «խոնջանները կապելու» և «Ավետարանը կապելու» ծիսական խափանման միջոցներ, քննության մեթոդներ ու պատժատեսակներ: Եվ դրանք նույնություն չեն: Մասնավորապես, Խոր Վիրապի կամ այլ միջոցներով մահիվան դատապարտվածները երկարյա շղթաներով կամ բոկերով կապվել են ձեռքերից, ոտքերից, պարան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցից, երբեմն էլ՝ բերանից: «Քազմաժամանակյա կարևոր կապանքների» ենթարկվածները կամ կապված վիճակում պատիժը բանտում կրողները նույնպես կապանքների են ենթարկվել որ Վիրապ նետվածների նման, ինչպես Արշակ բագավորը Անհուշ բանտում: Բանտ, որը, անկառած, նմանեցված է եղել դժոխքին: Դրանց կիրառման նպատակը եղել է հատուցումը, բայց ոչ ուղղումը կամ վերադաստիարակումը: Իսկ մնացյալ կապելու ձևերը եղել են նախարնեության կատարման ծիսական ձևեր ու մեթոդներ, որոնք նույնպես ունեցել են պատմին բնորոշ որոշ նպատակներ՝ արդարության վերականգնում, հանցագործին գոշման ու ապաշխարության հակել, նրան ուղղում, վերադաստիարակում:

Մյուս իրավահայտ աղբյուրը, որում բազմապիսի կապելու ձևերը ներկայացված են որպես խափանման միջոցներ, քննության ծիսական մերողներ և օրինական պատմամիջոցներ՝ Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառքն» է: Այդ կրոնակիրավական և փիլիսոփայական երկը հայկական վաղ քրիստոնեական և գրադաշտական իրավունքի ճանաչման պատմական աղբյուր է: Այն իմմանավոր ապացույցներ է պարունակում այն մասին, որ գրադաշտական իրավունքը, և մասնավորապես, դրա մաս հանդիսացող կապելու ինստիտուտը, եղել է նաև հայկական: Այն նաև վկայում է այն մասին, որ քաղաքակրթությունների ու իրավական համակարգերի հերթափոխում, հաջորդականության ու ժառանգականության սկզբունքների հիման վրա, գրադաշտական իրավական համակարգը չնշին բացառություններով (ամուսնա-ընտանեկան իրավունք և այլն) քրիստոնեացվել և շարունակել է գործել Սեծ Հայրում՝ միաձուլվելով Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Սեծ բագավորի ջանքերով ներմուծված ու ներդրված հայկական վաղ քրիստոնեական իրավունքի հետ: Մասնավորապես, հայկական քրիստոնեական իրավունքին է անցել ամբողջ գրադաշտական պատմահամակարգը:

«Բանդը և կապանքը», որպես երկրավոր դատավորի կողմից հանցագործների նկատմամբ կիրավող օրինական խափանման միջոց և պատմամիջոց, որպես նրանց, ինչպես նաև պոտենցիալ հանցագործներին ահարեկելու, նրանց ուղղելու, վերադաստիարակելու միջոց և հատուցում հիշատակված է «Հաճախապատում ճառքի» Ե ճառի 59-րդ տաճը: Դրանում ասված է. «Զի որպես գերկրաւոր դատաւորս իրաւարարս ասեմք, որ զշարագրո՞ւ և զպիդս և զանիրաւս ի բանդս և ի կապանս և ի տանջանս և ի սատակումն մարմնոյ մատնեն, զի խաղաղութիւն առցէ աշխարհս, և ինքն փառաւրեսցի, այսպէս իմանամբ և զԱստուծոյ դատաստանն»²¹: Այսպիսով, բանդն ու կապանքը, տանջե-

լը, և, նոյնիսկ՝ «սատակեցումը», հայտարարվում են հանցագործների նկատմամբ կիրավող քննության կատարման օրինական եղանակներ, խափանման միջոցներ և պատմամիջոցներ՝ կիրավող Աստծո դատարանի կողմից, Աստծո դատաստանի ժամանակ: Նման պատկերացում Աստվածաշնչում կամ որևէ քրիստոնյա ջատագովի երկում բացակայում է: Բայց առկա է գրադաշտական աղբյուրներում: Այն նման է Չինկատ կամքջի մոտ իրականացվող գրադաշտական աստվածային դատաստանին, որի ժամանակ արդեն գրումն ու աղաչանքը ոչ մի նշանակություն չունեն: Իսկ երկրային դատաստանի ժամանակ ունեն: Եվ բանդի ու կապանքների, տանջանքների ու մահ պատճառելու գլխավոր նպատակը ոչ թե և ոչ միայն մեղքի բավումն է և հատուցումը կատարածի համար, այլ նաև հանցագործի հետդարձը հանցավոր ճանապարհից ու նրա ժառավորեցումնե, այն է՝ դժոխքից փրկվելը և Երկնային ժագավորության արժանանալը (հատուկ արեւելնցիս և դրա արդյունք): Ինչպես նաև (և դա ակնհայտ է Գրիգոր Լուսավորչին կապելու, քննելու և կապված վիճակում որ Վիրապ նետելու ամբողջ գործընթացից) երկրի խաղաղեցումը (ընդհանուր պրևենցիա): Այն է՝ հասարակության ահարեկումը և նրա անդամներին չարագործություններից, պղծություններից ու անհրավույններից հեռու պահելը:

«Հաճախապատում ճառքի» Ը ճառի 92-94-րդ տաճերում նորից վկայվում է բանդի ու կապանքի կիրառման իրավական օրինական ու օգտակար լինելը հասարակության համար: Դրանցում ասված է հետևյալը. «Եթ միշտ սպառնալիք իշխանաց և դատաւորաց առ անխտիբս ի չարիս, առ սուտս և երդմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս, շունս, կախարդս, դիրս, և որ այլ ևս են հոյլք մեղաց: Չորս բանդիր և երկարի կապանալք և պէսպէս տանջանալք խոշտանգելն և մահ ի վերայ ածեն, զի այլը երկիւ ունիցին և արգելցին յանխնայ անարկնութենէն: Իսկ որ խրատին և զան ի լատորին կարգաց և իրաւանց բազաւորի, ի միամտութեանն և ի հպատակութեան կացուցանեն զանձինս, այնպիսեացն փառք և պատի և պարզեք ազատութեան շնորհենէն²²: Ինչպես ակնհայտ է դատնում այս տներից, բանդեր ու կապանքներ կիրառել նորից դիտվել է որպես մեղավորին գոշման հակելու, մեղքերը խոստվանելու և մահվանց (և մահապատից, և դժոխքից) փրկելու, ազատելու միջոց: Ինչը Գրիգոր Լուսավորչին խոստանում էր Տրդատ Սեծ բագավորը նրա նկատմամբ զանազան տեսակի կապանքներ կիրառելիս: Միաժամանակ այստեղ նորից և հատուկ կերպով շեշտվում է պատմի ընդհանուր կանխման նպատակը: Կապելը, մահապատիժը և այլն կիրավում են նաև մարդկանց վրա երկյուղ

տարածելու և «անխնա անօրինականությունը» արգելու համար:

«Հաճախապատում ճառքի» ԺԶ ճառի 15-16-րդ տներում հերթական անգամ խրախուսվում, քաջալերփում են բոլոր նրանք, ովքեր հանցանքներ գործելուց հետո դատարանում անկեղծորեն զղացել, մեղքերը կամովին խոստվանել են, բոնել ուղղվելու և վերադաստիարակվելու (քրիստոնեություն ընդունելու) ճանապարհը: Խսկ նրանց հասցեին, ովքեր դա անել հրաժարվել են, Աստծու անունից Գրիգոր Լուսավորիչը սպառնում է «...հրով և ցրտով, հրով և սառամանեար, քերանովք և հարուածովք, բանդիք և կապանար, սովով և ծարաւով, սրով և մահու, սպառնալեար և ողոքանար, զի երկշոտն զարհորեսցի և արին կալդասցի»²³:

Այս ամենից կարելի է հետևություն կատարել, որ եթե նախարձնության կամ դատաքննության ժամանակ կապելու և այլ տանջալից մերողներ կիրառելու ընթացքում հանցագործության սուրյեկտը հակվել է անկեղծ գրջնան, խոստվանել մեղքերը և կանգնել ուղղման ու վերադաստիարակման ուղու վրա, ապա կապելու մնացել է որպես դատավարական խափանման միջոց և քննության գործուն մեթոդ: Նման դեպքում հանցագործի ահարեկման, ուղղման և վերադաստիարակման, ինչպես նաև հասարակության ահարեկման, «լավության կարգերին», այն է՝ բազավորի ու եկեղեցու սահմանած, պետության հարկադրանքի ուժով ապահոված իրավունքի նորմերին ենթարկելու նպատակները ձեռք են բերվել առանց կապելու որպես պատիճ (սովորաբար կիրառվող ազատազրկման, կամ որ Վիրապ նետելու, կամ այլ կերպ մահվան դատապարտելու հետ) կիրառելու միջոցով: Եվ այն կապվածները, որոնք քննության ընթացքում զղացել, հնագանդվել են նոր օրենքներին, հայտարարվել են արձակման, բողության ու խրախուսման արժանի՝ անկախ կատարած հանցանքի ծանրության աստիճանից: Այդպես բողության և պարզների արժանացան հայ որոշ նախարարներ, որոնք կապվել են մինչև 451թ. ապատամբությունը և դրանից հետո:

«Հաճախապատում ճառքում», որպես հանցագործությունների կանխման ու նախականիման օգտակար (արժեքավոր), առավել գործուն միջոց, օգտագործվում է դժոխքում հավիտյան կապվելու գաղափարը: Եթե երկրային դատարանում հնարավոր է անկեղծորեն զղացական խոստվանել մեղքերը և ազատվել քրեական պատմից ու պատասխանատվությունից, մասնավորապես՝ կապվելու, ապա դժոխքում դա անել հնարավոր չէ: Այդ գաղափարն առավել վառ արտահայտված է Ի ճառի 44-րդ տասնը: Կրանում ասված է. «Խսկ ձեռք որ ըստ աղտեղի ցանկութեանց ի յամաւրոյսն չարամերձեալ ինքեան և կամ գործակցաց ախտասիրաց, և դարձեալ որ

գողանայ, որ տանջեն և նեղեն և սպանանեն, այն ձեռք կապին իրեղին կապանաւը և մատնին անվախճան տանջանացն անշեց իրոյն, և ջնջին ի կենդանի գրոյն տախտակացն Քրիստոսի»²⁴: Ի ճառի 48-րդ տանն էլ ասված է. «Խսկ որ զարտուղեցան ուոր յարդարութեան ճանապարհեն, և զրահետ եղեալ մոլորեցան ի շար անդր ի վնասակարսն ընթանալով, յանսրբութիւն, յաւազակութիւն, յապիրատութիւն, ի ստահակութիւն, անիրաւ յամենայն ճանապարհ զնալ որ տանի ի կորուստն յափտենից, այնպիսի ուոր մեկնեալ ի կենաց անտի առաքին ի վիհս դժոխց, որ ոչ իցէ վախճան և կամ հանումն ի կապանաց տանջանացն լուծանել»²⁵:

«Հաճախապատում ճառքի» Ի ճառի այս տներից նորից ակնիայտ է դառնում, որ երկրային կյանքում հանցագործություններ կատարած, դատարանների կողմից կապված, կապանքների ու մահվան դատավարտված և այդպիսով դժոխք առաքված մարդկանց հոգիները կապանքներից ազատվելու հնարավորությունից հավիտյանս զրկված են: Այնուղի արդեն հանգրվանած ու կապված մարդու հոգու զղումը որևէ նշանակություն չունի: Դա արդեն լիարժեք հատուցում է երկրային կյանքում կատարած հանցագործությունների համար: Բայց հատուցումը զրադաշտական (և վաղ քրիստոնեական) իրավունքում, ինչպես դա ակնիայտ է, դիտվել է միայն որպես պատմի ծայրահեղ, ոչ օգտակար նպատակ. Իրացման ենթակա նպատակ միայն այն դեպքում, եթե սպառված են պատմի մյուս նպատակներին հասնելու՝ զղացան և մեղքերը խոստվանելու հակելու, ուղղելու և վերադաստիարակվելու հնարավորությունները:

«Հաճախապատում ճառքում» առկա պատկերացումներն էլ այն մասին, որ դժոխք ընկած հոգիները դեմք ու խրախտարների (խսկ երկրային կյանքում՝ երկրային քննչների ու դատավորների) կողմից բանդի ու կապանքների միջոցով ենթարկվում են զանազան տանջանքների՝ ակնիայտորեն զրադաշտական են: Նման նորմեր, պատկերացումներ, արժեքային դատողություններ գտնել 1-3-րդ դարերի վաղ քրիստոնեական կրոնահրավական աղբյուրներում հնարավոր չեն: Այդ դարերում եղել են միայն քրիստոնեական ոչ լեզվակի և ոչ լեզվական կիսալեզվակ համայնքներ, որոնցում դատավորներ և բանտեր, ինչպես նաև մարդկանց կապվելու և տանջելու անհրաժեշտություն ու հնարավորություն չի եղել: Ծ-ժոխիքի ու նրանում գոյություն ունեցող բարքերի, հոգիներին կապվելու, կապված վիճակում կախելու մասին պատկերացումներ այդ աղբյուրներում նույնապես չկան:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

¹ Պետք է նշել, որ ձիու հետ կապված այս պատմությունը որոշ հայ պատմաբաններ և գրականագետները համարել են Բուզանդի հնարած պատմություն կամ առասպել։ Բայց դա մոլորություն է։ Բանն այստեղ ձին չէ, այլ այն, որ Տիրան բազավորը ստել և խարել է, այն էլ՝ չնշին պատճառով։ Իսկ ստելը և խարելը գրադաշտական իրավունքով համարվել են ծանր հանցագործություններ։ Դրանց համար նախատեսված պատիժը եղել է կուրությունը, իշխանազրկումը և մահը։ Ավելորդ չի լինի ասել, որ կույրը, խովը, կուզ ունեցողն իրավունք չուներ այլև բազավորել, և ըստ այդ իրավունքի մեխանիկորեն իշխանազրկվում էր կամ էլ զրկվում իշխանության ժառանգումից։

² Տե՛ս, Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 82-84։

³ Տե՛ս, Փավստոս Բուզանդ, նույն տեղում, էջ 198-199։

⁴ Տե՛ս, Փավստոս Բուզանդ, նույն տեղում, էջ 198, 260, 316-318։

⁵ Տե՛ս, Փավստոս Բուզանդ, նույն տեղում, էջ 318-319։

⁶ Տե՛ս, Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 26։

⁷ Տե՛ս, Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 40։

⁸ Տե՛ս, Եղիշե, նույն տեղում։

⁹ Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 101, 110։

¹⁰ Տե՛ս, Եղիշե, նույն տեղում, էջ 276։

¹¹ Տե՛ս, Եղիշե, նույն տեղում, էջ 280-282։

¹² Տե՛ս, Արտա Վիրապ Նամակ, էջ 85, 96, 110-111։

¹³ Տե՛ս, Եղիշե, նույն տեղում, էջ 280։

¹⁴ Տե՛ս, Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 132։

¹⁵ Տե՛ս, Ղազար Փարպեցի, նույն տեղում, էջ 178, 192, 194։

¹⁶ Տե՛ս, Ղազար Փարպեցի, նույն տեղում, էջ 204-205։ Սիմքրոն թարգմանության մեջ այս տողերը թարգմանված են որպես «խիստ կալանքի տակ պահել», որը սխալ թարգմանություն է։ Խոսքը հայ ապստամբներին խիստ կապանքների մեջ ազատազրկելու, և ոչ թե խիստ կալանքի ենթարկելու մասին է։

¹⁷ Տե՛ս, Ղազար Փարպեցի, նույն տեղում, էջ 204-206։

¹⁸ Տե՛ս, Ղազար Փարպեցի, նույն տեղում, էջ 210։

¹⁹ Ինչպես տեսնում ենք, մահապատիճ իրականացնողները եկել են զիշերը, աքլորականչին, ջահերն առջևում բռնած։ Ծիշտ այդպես էլ ժամանակին մոգերն ու դափիճները մոտեցել են այն վայրին, որտեղ կար դախմա (դահմա, դաքմա), և որի մոտ զիշերով նրանց սպասում էր Սուրբ Հռիփսիմեն՝ դախմայի վրա մահապատիճ ենթարկվելու հանար (Ազարանգեղոս, 197-րդ պարք, էջ 114)։ Եվ զիշերը ջահերով հանդիսավոր երթ կատարելը դեպի դախմա՝ հանցագործների նկատմամբ զրադաշտական մահվան ծես սկսել է նշանակում (հասկանալի է, որ արդարակյացների դիակների հուղարկավուրումը դախմայի վրա կապելու միջացով կատարվել է ցերեկը)։ Գիշերը համարվել է Արքիման դիմ ստեղծած, և դիմքի ու դիմանման մարդկանց արարքների ժամանակ։ Դրա համար էլ նման մարդիկ մահապատմել են զիշերը։

²⁰ Տե՛ս, Ղազար Փարպեցի, նույն տեղում, էջ 218։

²¹ Տե՛ս, Հաճախապատում ճառք/Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անքիլիաս-Լիբանան, 2003, էջ 29։

²² Տե՛ս, նույն տեղում, էջ 50։

²³ Տե՛ս, Հաճախապատում ճառք, էջ 100։

²⁴ Տե՛ս, Հաճախապատում ճառք, էջ 117։

²⁵ Տե՛ս, Հաճախապատում ճառք, էջ 117։ Նշված Ի ճառի 48-րդ տանն օգտագործված է .գրահետե, իսկ Ազարանգեղոսի գրքի 147-րդ պարբերությունում? .գրահետեգերպ (էջ 88)։ Դրանք, ինչպես նաև .գրախոսե բառը հուշում են, որ զրադաշտական պետության և իրավունքի հիմնադիր Սահմանադրության կամ Զարդաշտի կամ Զարդուշտի ամունք հայ եկեղեցականները դիտավորյալ կերպով աղավաղել և Զրադաշտի են վերածել՝ «կեղծ սրբի», զրախոսի, զրահետի ինաստով։ Այդպիսով նրա նկատմամբ արտահայտվել է արհամարհանք, և նրա անվանը տրվել բացասական բնույթ և իմաստ։

Самвел Хачатрян

Кандидат юридических наук, доцент, преподаватель ГГУ

РЕЗЮМЕ

*Связывание как мера пресечения, метод расследования и вид наказания
в зороастриском и раннехристианском армянском праве*

В Авесте и в иранских зороастрийских источниках познания права часто описываются некоторые виды связывания веревками и цепями подозреваемых, обвиняемых и осужденных. Это являлось как мерой пресечения, так и методом судебного следствия, а также видом наказания и компонентом похоронного обряда. Такие обрядовые действия описываются и в армянских раннехристианских источниках познания права - в «Истории Армении» Агафангела, в «Истории Армении» Фавста Бузанда, в «Истории Армении» Лазаря Парпети а также в книге Егише «О Вардане и армянской войне». В частности, Агафангел описывает историю связывания Григора Просветителя. Когда выяснилось, что состоящий в свите царя Великой Армении Тиридата Третьего Григор является отступником, так как он отказался от зороастризма и стал христианином, то в ходе расследования этого преступления он неоднократно подвергался ритуальному связыванию различными способами. Приговоренный в последствии к смертной казни, он был связан особо «тяжким» образом (ноги и руки притягивались к шее) и брошен в Хор Вирап - место, по своим характеристикам приближенное к зороастрийскому аду.

После подавления восстания 451 года суд при иранском царе Ездигерте Втором осудил многих армянских князей и духовных лиц, а также сатрапа Великой Армении Васака Сюни, к различным видам обрядового связывания и лишения свободы.

Обрядовое связывание впоследствии перешло в раннехристианское армянское право (религию) и применялось в средневековой Армении.

Ключевые слова: Тиридат Третий, Григорий Просветитель, связывать, зороастрийская Армения, христианская Армения, Хор Вирап, ад.

Samvel Khachatryan

Doctor of Law, Associate Professor, GSU Lecturer

SUMMARY

*Tying as a preventive measure, a method of investigation and a form of punishment
in Zoroastrian and early Armenian Christian Law*

Avesta and Iranian Zoroastrian sources of knowledge of law often describe certain types of tying by ropes and chains of suspects, defendants and convicts. It was both a preventive measure and a method of judicial investigation, as well as a component of ritual act. Such ritual-like actions are also described in ancient Armenian sources of knowledge of law – in the “History of Armenia” of Agathangelos, the “History of Armenia” of Faustus of Byzantium, the “History of Armenia” of Lazarus Pharpensis as well as Eghishe’s book “About Vardan and the Armenian war”. In particular, historian Agathangelos describes the story of tying of Gregory the Illuminator. Being the courtier of the King of Great Armenia Tiridates III, Gregory departed from Zoroastrism and adopted Christianity. During the investigation of this crime he was frequently tied in different ways as a part of a ritual. Later on he was sentenced to death, tied particularly “roughly” (arms and legs pulled to the neck) and thrown into Khor Virap – a place resembling the Zoroastrian hell.

After the suppression of the rebellion in 451, the court of the Iranian king Yazdegerd condemned many Armenian princes and clergymen, as well as the satrap of Great Armenia Vasak Syuni, to various types of ritual tying and imprisonment.

Ritual tying was afterwards adopted by the early Armenian Christian law (religion) and was used in medieval Armenia.

Keywords: Tiridates III, Gregory the Illuminator, tying, Zoroastrian Armenia, Christian Armenia, Khor Virap, hell.